

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

ՈՐ Ի ՍՈՒՐԲԻ ԴԱՅԱՐ



ՅԱՅՍԱՐԱԲՈՒՅՆ



ԱՅՄԱՎԻԳ (Կրագրիս ինը տարուան անընդհատ շարունակութիւնը ,
որով իրեք անգամ իր սահմանեալ եռամասն ու եռամեան դարերն
լմընցընելով՝ կը պատրաստուի մտնել իր չորրորդ դարն ու տասներորդ
տարին , և միանգամայն իրեն 'ի սկզբանէ հետէ բռնած ոձին միակերպու-
թիւնն ու երենալու ժամանակին միութիւնը , բաւականապէս կը ցուցընեն թէ
ոչ աշխատասիրողաց կողմանէ պակասութիւն մը եղել է իրենց պարտուցը , և
ոչ բարեսէր ընթերցողաց կողմանէ նուազութիւն մը իրենց վարկմանն ու նե-
րողամիտ դատմանը :

Ես երկու բանս այնչափ աւելի հաւատալի կ'ըլլայ , 'Կախ մեզ , որչափ որ նոյն
իսկ աշխատասիրողքս ըլլալով՝ կրնանք գիտնալ ուսումնական (Կրագիր մը հանե-
լուն դժուարութիւնները . և մասնաւորապէս անանկ (Կրագրի մը որ ազգին ամէն
դասուցն ալ ծառայէ , ինչպէս իմաստնոյն անանկ ալ ռամկին , կարդացողին ու
արուեստաւորին , երկրագործին ու վաճառականին . և վերջապէս արանց , կանանց
ու տղայոց , և ամէն հասակի ու աստիճանի անձանց . որոնց որ չէ թէ միայն
ախորժակը , այլ և մտածմունքը և գործը և պիտոյքը մէկմէկէ տարբեր են , և
շատ անգամ ալ մէկմէկու հակառակ . որով և զանոնք միացընելն , կամ զամէնքն
ալ զատ զատ գոհ ընելը , աւելի անկարելի է քան թէ դժուարին : Իսայց աս բանիս
մէջ՝ կրնանք ըսել անկեղծութեամբ , թէ մենք մեր պարտքն ըրինք ձեռքերնէս
եկածին չափ . ինչպէս ուրիշներն ալ կրնան վկայել :

Ուստի ուրիշներուն ալ հաւատալի կ'ըլլայ կ'ըսեմ , մէյմը անոնց որ անձամբ
փորձած են այսպիսի գրուածոյ մը պարտքը վրանին առնելով . որոնք թէպէտ
ուղիղ գիտմամբ և արիական ազգասիրութեամբ ձեռք զարկել են այսպիսի

աշխատութեան մը և շատ արգելքներու յաղթել են , բայց վերջապէս իրենք ալ անոնցմէ կամ մասամբ կամ բոլորովին յաղթուել են : Իսկ որոնք որ միայն ընթեր ցողք են , անոնք ալ կրնան ձանչնալ , տեսնելով այնչափ ազգային օրագրաց ու լրագրաց ծագին ու մարիլ , կամ ակամայ կամօք իրենց առջի դրած պայման ներէն հեռանալը : Բայց թէ արդեօք իր վախճանէն հեռացած ու ազգին ակրն կալութենէն վերջացած գործ մը՝ որչափ օդուտ կրնայ ընել ու ինչ ընդունելութիւն կրնայ գտնել , այդ մեր քննելու բանը չէ , որովհետեւ ամէն մարդ կրնայ դատաստանն ընել . վասն զի ամէն ընթերցող կամ զրուածքի մը ընկեր զրուող՝ իրաւունք ունի պահանջելու , որ ինչ պայմաններով ու ինչ տեսակ զրուածքի ընկեր որ զրուեցաւ , նոյն պայմաններն ու կերպը անընդհատ պահուի . որպէս զի ուսումնական օրագիր մը՝ քաղաքական լրագրի չդառնայ , ուամկական օրագիրը՝ ուսումնականաց ալ շատին անիմաննալի չըլլայ . ազգային ըսուած լրագիր մը՝ ծպտեալ եւրոպացի մը չերենայ , հրահանցիչ ու զուարձացուցիչ տետրակ մը զառն երգիծանքներու կամ անպատշաճ առասպելներու գործի չըլլայ , ձմարտասէր ու անկողմնասէր ըսուածը՝ մամնաւորի մը կողմ բռնելով , ուրիշներուն ձամբան անիրաւ չցուցնէ : Տարակոյս չկայ՝ որ միայն ազգին օգտին համար օրագիր հանողը , պէտք է որ տարուէ տարի իր զրուածքը կատարելագործէ , բայց միշտ իր նպատակն ու տուած խոստմունքը և ազգին ակնկալութիւնն յիշելով . որպէս զի օգտակարին դժուարութենէն փախչելով՝ անօգուտ բանին դիւրութեանը ձեռք չզարնէ :

Հիրաւի մեզ ալ շատ աւելի դիւրին էր , և ընթերցողաց ալ աւելի հաճոյական կ'ըլլար , եթէ մեր օրագիրն ալ մէկ դաս մարդկանց համար միայն ըլլար , զոր օրինակ կամ իմաստոց և կամ ռամկին . վասն զի ան ատեն կրնայինք անոնց ախորժակը քննել իմաննալ , և ըստ այնում օրագիրս անընդհատ ոճով մը շարունակել : Բայց քանի որ աս մեր Ռազմավէպը ամէն դասուց համար ալ ծառայելու է , չենք կարող ինչուան հիմա բռնուած ոճէն լաւագունի ու կատարելագունի մը հետեկիլ . այլ որչափ կարելի է մենք մեր կողմանէ ջանալով՝ որ ձանցած թերութիւններն վերցրնենք և պակսած կատարելութիւններն աւելցրնենք . և միանգամայն բարեսէր ընթերցողաց ալ ազատութիւն տալով՝ որ իրենց ըրած դիտողութիւններն կամ պահանջած կատարելութիւննին մեզ գրով ծանուցանեն . մենք ալ ինչպէս որ միշտ , այսպէս ասկէց ետեւ ալ կը ջանանք անոնց ազգեցութիւններէն օգտուիլ ուղիղ գործադրութեամք . իսկ թէ մեր կողմանէ արգելք մը ունինք՝ որ իրենք չեն զիտել , անոնց ծանուցանենք . որովհետեւ ամենայն կերպով աս փափաքս ունինք , որ աս փափրիկ աշխատութիւննիս՝ ինչպէս ինչուան հիմա , ասկէց ետեւ ալ միշտ ազգերնուս նախ օգտակար և երկրորդ հաճոյական ևս ըլլայ :

Ի՞ս երկու վախճաննին համնելու մոքով՝ առաջիկայ իրեք տարուանս մէջ ալ ընդհանրապէս նոյն կարգն ու նոյն նիւթերը պիտի պահէնք . ուստի (յրագիրս պիտի մնայ նոյնպէս Ռարոյական , Ռանսարիրական , Տնտեսական և Ռնական .

ամէն մէկ մասանցն ալ կարելի ու պահանջելի ճոխութիւնը տալով . անոր համար բաց ինչուան հիմա ճանցուած նիւթերէն ,

Ի՞անափրական մասին մեծապէս ձեռնտու և զարդ պիտի ըլլայ՝ մեր Հայ-կական Ճեմարանը , որուն մէջը խօսուած ճառերը ընտրանոք պիտի հրատարակուին Ի՞ազմավիպիս մէջ , որոնք յուսանք որ հաճոյ ըլլան մեր ազգին բանասիրացը , մեծագոյն մասը ազգին հին և արդի վիճակացը վրայ տեղեկութիւններ բովանդակելովը , կամ հիմակուան եւրոպական բարձր ուսումնականութեան աստիճանին համաձայն ըլլալով : — Այս մասը ազգիս աւելի օգտակար ընելու մոքով , մենք ալ մեր կողմանէ ամէն ամիս մէյմէկ առաջարկութիւն պիտի ընենք , հրաւիրելով զուսումնասէրս և զսիրողս ազգիս , որ իրենց նոյն իննդրոյն վրայ մտածածը և տուած լուծմունքնին գրով մեզ հաղորդեն . խոստանալով որ եթէ իրենց և թէ մեզ պատշաճ որ երենայ՝ զանոնք ալ հրատարակենք (Դրագրիս միջոցաւը . ինչպէս որ ինչուան հիմա ալ դրսէն հատուած ընդունելու չենք խորշած , ու տպել ենք օրագրիս մէջ , երբեմն զրոյլին անուամբը՝ երբեմն առանց անուան , ինչպէս որ ուզել են : Այստի նոյն առաջարկութեանց լուծմունքներն ալ զրկողը պէտք է յայտնի կերպով ծանուցանէ մեզ զրով , թէ արդեօք նոյն իրեն հատուածը կ'ուզէ որ հրատարակուի թէ չէ , և թէ պատշաճ կը սեպէ իր անունն ալ դնել թէ ծածկել :

Ծնտեսական մասին ալ առաւել մտադրութիւն պիտի ըլլայ . մասնաւորապէս տնական տնտեսութեան հատուածներ դնելով , այնպիսի ոձով մը որ մեր ազգին ալ առաջնորդի մը պէս ծառայէ , և գիտնան թէ ինչպէս տան ամէն պիտոյքը ըստ ժամանակին հոգալու է , որ թէ աժան և թէ աղէկ ըլլայ . կամ թէ տան մէջ ունեցածներն ինչ կերպով պիտի պահուին ու մատակարարուին :

Ի՞նական մասին մէջ ալ պիտի ջանանք որ բնապատմութեան մասը դասական կարգով մը աւանդենք , որ ընդհանուր տեղեկութիւն մը առած ըլլալով նոյն գիտութեանց , առանձինն զրուած կամ զրուելու հատուածներն ալ դիւրաւ հակըցուին և աւելի օգտակար ըլլան :

Եթէ կարելի է ամէն թերթին վերջին երեսն պիտի ընծայեմք մանր գիտելեաց . ամսուն առջի թերթին վերջին երեսը դնելով զուարձալի հարցմունքներ , խաղեր , հանելուկներ , առակներ և այլն . իսկ ամսուն վերջի թերթին յետին երեսը նշանաւոր ժամանակակից դէպքեր :

Ի՞ազմավիպին աս չորրորդ եռամեան շրջանին՝ նուիրելով դարձեալ մեր աշխատութիւնը ազգերնուս սիրոյն համար , յուսամք իրենցմէ ալ ընդունելու ներողամիտ դատողութեան հատուցմունքը :



28
10219355
155

